

ՄԵՆԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисть, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարուած են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թաղված հարստութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Միջկարեան միաբանութեան
յօրքեանը. Նամակ Երեւանից. Նամակ Կարսից.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շիֆայրիայից.
Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական
չափութիւն. Մեր իրականութիւնը.

ԹԱՂԱՎԱԾ ՀԱՐՏՈՒԹԻՒՆ

Հաստատ աղբիւրից մեզ յայտնի է, որ
մի քանի անձինք գիտէին եւ իջմիածնի հո-
գեւոր իշխանութեան, խնդրելով որ ի-
րանց թոյլ տրվի յայտնի պայմաններով
շահագործել իջմիածնի կալուածքներ-
ում գտնվող հանքերը: Եղած առաջար-
կութիւնները մերժաւորապէս միմեանց նը-
ման են եւ կալուածքների վարչութեան
համար անձեռնառու: Առաջարկութիւններ
անողները ոչ մի շօշափելի պարտաւորու-
թիւն, ոչ մի լուրջ պատասխան աս-
տուծութիւն չեն վերցնում իրանց վրա,
իսկ վերապահում են իրանց համար ար-
տօնութիւնները թէ գտած հանքերը
ուրիշներին յանձնելու, թէ նորից կա-
պալը իրանց համար նպատաւոր պայ-
մաններով վերանորոգելու եւ թէ պատկա-
ռելի մի տուգանք վերցնելու հոգեւոր
կառավարութիւնից, եթէ նա՝ նոյն իսկ
ոչինչ գործ չը կատարած՝ կապալառու-
ներից գործը յետ վերցնի պայմանաւոր
վերջանալուց յետոյ:

Այժմ կազմված է խորհրդակցական մի
յանձնաժողով, որ պէտք է քննութեան
ենթարկէ իջմիածնի կալուածքների հան-
քատեղերի հետազոտութեան եւ հանքերի
շահագործութեան խնդիրը եւ այդպիսով
մշակէ գործունէութեան մի ծրագիր ա-
ռաջիկայի համար: Հանքերի հետքեր նը-
կատված են շատ կալուածքներում, միայն
յայտնի չէ թէ ո՞ր աստիճանի նրանք հա-
րուստ են եւ շահագործութեան համար
նպատաւոր: Չարեքայ վանքի կալուածքը
մօտ է Գետաբէկի յայտնի պղնձահանքին
եւ եթէ նրան աջողվի իր սահմաններում
զարգացնել հանքագործութիւն, նա կարող
է օգտվել այն փորձերից, որ արել է Սի-
մեան գործարանը, կարող է վաճառել

գործարանին դուրս բերած հանքը, վեր-
ջապէս կարող է ձեռնառու պայմաններով
կապալով տալ այդ հանքատեղերը: Գան-
ձասարի վանքի հողերի տարածութեան
վրա նկատված են հանքերի տեղեր եւ
հաւանական է, որ այնտեղ կարելի կը լինի
լուրջ արդիւնաբերութիւն կազմակեր-
պել: Այդպէս են եւ Տաթևի, Հաղարծնի եւ
միւս կալուածքների հողերը:

Եթէ այդ ընդարձակ տարածութիւններից
միայն մէկում աշողվել լուրջ գործ կազ-
մակերպել, արդէն զրանով սկիզբը դրված
կը լինէր աւելի լայն գործունէութեան
համար: Առաջին փորձը այնքան ձեռնար-
կողներ եւ զբաղակալներ կը դրաւէր,
որ բոլորովին կապահովէր միւս կալուածք-
ներում կատարելիք հետազոտութիւնների
ծախքերը: Իջմիածնի ինքը պէտք է իր
վրա վերցնէ առաջին փորձնական
հետազոտութիւնը եւ չը խնայէ դրա
համար անհրաժեշտ ծախքերը: Իսկ եթէ
որ եւ է պատճառով նա անկարող լինի այդ
կատարել կամ անարժան դատել իր հա-
մար, նա յամենայն դէպս չը պէտք է իր
բոլոր կալուածքների հետազոտութիւնը
եւ շահագործութիւնը յանձնէ մի անձի,
կամ մի ֆիրմայի, այլ առաջարկէ փորձի
համար միայն մի որոշ տեղ եւ այն էլ
մրցութեան հրաւիրելով ցանկացողնե-
րին եւ վերապահելով իրան նպատաւոր
պայմաններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Երէկ մենք մի փոքրիկ պատասխան տուինք
«Բաղաձայն»-ին: Բայց նկատեցինք, ընթերցող-
վանական ամսագրից մեր բերած կտորի մէջ
հետեւեալ գոհունակութիւնը. «Միայն ի թրքա-
հայս մեր գրական գործիչները ուրախալի խա-
ղաղութեամբ յառաջ կը վարեն իրենց խմբա-
գրական գործը: Այդ ինչ ուրախալի խաղա-
ղութիւն է—եւ հարկեմք դուք, երբ բաց էք
անում Կ. Պոլսի հայոց լրագրների կոյտերը,
երբ տեսնում էք այդ մեծ ու փոքր թերթերի
տարածութեան վրա անվերջ քաղաքական տե-
սութիւններ, թարգմանական շահագրգիռ վե-
պեր, այսինքն Պարիզի բուլվարների ապրանքը,
երբ տեսնում էք փոքրիկ կտորներ «Ազգային»
վերնագրի տակ, ուր մանրամասն պատմվում է

թէ այս ինչ վարդապետը ինչ քարոզ ասաց
կամ այն ինչ եպիսկոպոսը անցած գիշեր ինչ
էֆէնդիի տանն էր քնած.—իմացե՛ք, որ դա է
այն ռուսախալի խաղաղութիւնը», որ այնքան
հրճուած է պատճառում Կ. Ղազարի միաբան-
ներին: Մենք համոզված ենք, որ Կ. Պոլսի
հայ խմբագիրների այս ուրախալի խաղաղու-
թիւնը կամաւոր չէ. մենք չենք ուզում թոյլ
տալ, որ եթէ Բաթթի միջնորդը մի քիչ ա-
ռողջանար, մի քիչ մաքրվէր մեղաւորական բաւ-
տերիւններից, հայ լրագրողը պիտի շարունա-
կէր իր կրծքին սեղմել այն Սահարան, որ
այժմ է տիրում թիւրքաց մոսաւոր աշխարհում:
Մեր խօսքերի ապացոյց—Կ. Մ. Շամառնեանի
«Մախբը», որ անցեալ տարի փոքրիկ մէտօքի
պէս փայլեց թիւրքահայերի գրական հօբիզոնի
վրա, քայքայեց իսկույն խեղդիկ թիւրք եւ հայ
էֆէնդիների ձեռքով: Կ. Պոլսի հայ լրագրու-
թեան ներկայ դրութեան վերաբերմամբ շատ
ընթոյշ է, որ վնաստիկների փայլալայն ռու-
սախալի խաղաղութիւնը՝ մեծ իմաստութիւն
է համարվում եւ թիւրքահայերի գրական չըր-
ջաններում: Դա, ի հարկէ, միայն այն է ցոյց
տալիս, որ յետադիմական հոսանքները աւելի
են խոստում են այդ չըջանների մէջ իրեն-
քանական հետեւանք ընդհանուր կացութեան:
Ահա թէ ինչ սարսափներ է պատմում Վուր-
հանդալ՝ լրագրող քննադատութեան մասին.

Քննադատութիւն համար քննադատել, քննա-
դատել հինը, առանց նորի ու լուսաւորնը
ցուցնելու, քննադատել հաստատութիւն մը
երբ լուսաւորնը ունենալու ոյժը, բարոյական
կորովը, վարչական ձեռնհասութիւնը չու-
նինք, ապա՜ստ գաղափարներ նետել հրա-
պարակ, երբ հասարակաց կարծիքը զայն
ընդունելու իմացական զարգացում կամ
մտքի հասունութիւնը չունի, ժամանակին ող-
ւոյն ու պահանջումներուն հակընդէմ պատ-
գամներ որոնալ ժամանակաւաճութիւն
է եւ կը մատնէ զորովին տղայամտութիւնը:
Անհապաղ քննադատութիւնը օգտին պոռ-
չտուք կը նմանի: Քննադատութիւնը խն-
դիներ լուծելու վերջին միջոցը ըլլալու
է: Ինչ որ առանձին կրնայ կարգադրուիլ,
հրապարակ հանելու չենք, եւ ինչ որ թելա-
դրութեան ձեռով ի գլուխ կը կրկնուի, քննադա-
տութեան լեզուն ու չիշտ ունենալու չէ:

Յօդուածագիրը առհասարակ կամենում
է, որ սանձաւարի քննադատութիւնը Սան-
ձաւարի նոյն իսկ այն ողորմելի, վախկոտ,
հարիւր միջնորդի ճնշման տակ գտնվող պո-
ռական քննադատութիւնը... Կայ աւելի զըժ-
բաղը ցանկութիւն: Քննադատութիւն, եւ միայն
նա, կարող է կեանքը կարգաւորել, ցաւը

բժշկել. հայը եթէ ունի պակասութիւն, դա
հենց քննադատական կարողութեան չափազանց
մեծ թուլութիւնն է: Իսկ մեր նիկարները դեռ
սարսափում են, երբ գտնվում են մարդիկ, ո-
րոնք քննադատական ազատութիւն են ցոյց
տալիս: Երբ կայ, ասում են, մի հիմնարկու-
թիւն, որից լաւը մենք չենք կարող ունենալ,
մի քննադատե՛ք նրան. երբ տեսնում էք, որ
ժողովուրդը պատրաստ չէ ընդունելու մի որ եւ
է գաղափար, մի չօչափե՛ք այդ գաղափարը: Մի
խօսքով—ամեն բան արե՛ք, բայց մի քննադա-
տե՛ք. դուք կարող էք հիմնարկութիւնը քանդել,
կարող էք բարձրացնել, ինչպէս կամենում էք,
բայց քննադատել, պակասութիւնների հրա-
պարակ հանել—դա վնասակար է: Թո-
ղե՛ք ժողովուրդը մնայ իր դարաւոր աղի-
տութեան, նախապաշարմունքների մէջ: Դուք
կարող էք հաւատալ, որ երբ եւ իցէ
ժամանակ կը գայ, երբ այդ խաւար մաս-
սան կը վերանորոգվի հրաշքով, հենց ասանք
Գաբրիէլեան փողի մի հնչումը. սպասեցե՛ք
այդ սքանչելի ժամանակին, իսկ մինչեւ այդ
մի տարածե՛ք ժողովրդի մէջ լուսաւոր մարդ-
կութեան գաղափարները: Զարմանալի է, եթէ
այդ նիկարների երկրում «ուրախալի խաղա-
ղութիւն» է տիրում: Բայց դա գերեզմանային
խաղաղութիւն է. եւ վնաստիկ վարդապետ-
ները դուր չեն այնպիսի հրճուանքով «Պահպա-
նիչ» կարգում այդ խաղաղութեան վրա. չէ որ
կղերը գերեզմանների սիրահար է եւ մի առան-
ձին եռանդով է նրանք օրհնում:

Անցեալներում մենք առիթ ունեցանք ծա-
նօթացնել ընթերցողին թիւրքաց որբուկների
մի ողիսականի հետ—թէ ինչպէս չորս ողոր-
տարել էին Ամբրիկա եւ վերադարձրել Մար-
սէլ Բայց որքան էլ Աստուած ունի—եւ որբի
երկինքն էլ մի-մի պայծառ արեւ է ցոյց տա-
լիս: Եւ մենք չենք կարող չը դնել մեր ըն-
թերցողի առջեւ այն հարցանիքը, որ, ինչպէս
հաղորդում է նոյն «Սուրհանդակ» թղթակի-
ցը, տեղի է ունեցել վանի Սափապատ վանքի
որբանոցում: Որբանոցը ամուսնացնում էր իր
մէջ պատասպարված աղլիկներից մէկին, օրորող
վարդանոյշին:

Սահակ վարդապետ քիչ մը հանդիստ առ-
նել է վերջ, Հոգաբարձութեան կողմէ լուր
տրուեցաւ հարսնատ խնամքներին, որոնք
փութացին հարսը տանելու: Երկուստ բաղ-
մութիւնը խառն թատած լինելով, այրեղ
հիւրասիրութեան նշանով, իսկ կանայք բա-
ղարվով եւ քաղցրեղէնով, յետոյ մէջտեղ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ՇՈՒՅԼՈՒԹԻՒՆ

Մեր ազգի մտաւոր գործունէութեան ամե-
նաճիւղ հայկերէն—նրա գրականութիւնն է:
Այդ, եթէ այդ հայկու մէջ նայելու լինենք,
պէտք է հաւատարմանք, որ հայկական մտքի
գործունէութիւնը ոչ միայն թոյլ է, այլ եւ
անկանոն ու ճիւղաճիւղ միակողմանութեամբ է
ընթանում, որովհետեւ մեր գրականութեան
զանազան ճիւղերի աճումը գուրկ է առողջ
համալսականութիւնից: Գերազանց մեծ են
նրա անկենսական, անկարեւոր մասերը, իսկ
հազիւ նշմարելի, ծիրված եւ վտիռ ձեւ ու-
նեն գրականութեան ամենաառաջնակարգ, ա-
մենակենսունակ եւ կարեւոր ճիւղերը:

Եւ այս մեր ասածների մէջ համոզվելու հա-
մար բաւական է համեմատել հնախօս աղե-
ղու աւարանական գրականութեան նուիրած
եւրօպական հրատարակութիւնները միմիայն-
ների հետ:

Եւրօպական վիթխարի գրականութեան մէջ
հնախօսութեան եւ լեզուաբանութեան նուիրած
պարբերական հրատարակութիւնների թիւը հա-
զիւ նշմարելի տեղ է բռնում եւ այդ բոլորը
վին բաւական է համարվում գիտութեան յի-
շած ճիւղերով հետաքրքրվող հաստատութիւն-

ների եւ անհատների պահանջները լրացնելու
համար: Իսկ մեզ մօտ հնախօսա-լեզուաբանա-
կան հրատարակութիւնները մի հրէշաւոր գեր-
աժաման են հասել, մի անմիտ չափութեան
կերպարանք են ստացել: Մեզ մօտ վառվում
են թղթի անսպառ դէպքեր, թանգազին միջոց-
ներ, աշխատանք եւ եռանդ այդ նեղ մասնա-
գիտական ճիւղերի վրա. այնպէս որ կարծես
ամբողջ հայութիւնը հնախօսներից եւ հնամոլ
հայկաբաններից լինէր բաղկացած: Վիէննայ,
Վիենտի, Էլմփադին, Մոսկվա, Պարիզ, Թիֆ-
լիս, Պոլս, Երեւան... հենց ժողովածուներ
եւ ամսագիրներ է, որ տաղտկալի միօրինա-
կութեամբ նոյնանման յօդուածներ են շարում
սեպագիրների, գերեզմանաքարերի եւ հին մա-
ղաղթների մասին: Այդ պատկառելի հնու-
թիւնների մէջ անգամ ինչ կեանք չէ հե-
տաքերում մեր յարգելի «գիտականներին»,
այլ աւելի՛ նիւթը, ձեւը: Եւ ահա տարին տասն-
երկու ամիս «պիլի-միլի», «այս է տապան»,
«ճայնադրութիւն», «Սորենացի» եւ այլ երե-
ւելի հետազոտութիւնների մասին կարդում էք
եւ Պարիզի «Բանասէր»-ում եւ Վիէննայի «Հան-
դէսում» եւ Վիենտիի «Բաղաձայն»-ում եւ
Էլմփադին «Արարատում» եւ զանազան «Ժողո-
վածուներ» մէջ:

Անկախած, հնախօսութեան եւ լեզուաբա-
նութեան մենք հակառակ չենք, բայց միտ ա-
մեն բան չափ ու սահման ունի: Նախ սր ի-
րաքանչիւր համարկային վարժութիւն եւ շա-
րահիւսութիւն չէ կարող ի նկատի առնվել իւ-

րեւ գիտական աշխատութիւն եւ երկրորդ՝ որ
աւելի կարեւոր է, չէ կարելի մի սահմանա-
փակ խմբի քառահանգիճի համար չորս
սահման են հասել, որովհետեւ լեզու նոյն-
նանման մասնագիտական նիւթերով: Մեր թէ
մտաւոր եւ թէ նիւթական աղքատութեան մէջ
դա վնասակար եւ աննպատակ մի չափութիւն
է: Կեանքն իր անթիւ պահանջներով կանգնած
է մեր առաջ. մեզ անպաշտ է թէ մեր երկիրը
եւ թէ ժողովուրդը, հայը չունի գիտութեան
ամենաանհրաժեշտ ճիւղերից հասկացողութիւն,
մեր գրականութեան ամենակենսունակ ճիւ-
ղերն անգամ միջոցների պակասութիւնից տու-
ժում են, իսկ մենք հանգիստ քաղում եւ ինք-
նաբաւական միամտութեամբ տարին տասնե-
րու ամիս բանեցնում ենք վիէննայի, Վիենտի-
ի, Էլմփադինի, Պարիզի եւ այլ տեղերի տպա-
րանները հնախօսաւարական մոլութեան
վրա: Ժողովուրդը մատչելի գիրք, անհրաժեշտ
ճանապարհներ չունի, իսկ մենք ահագին միջոց-
ներ ենք վառնում մկնէրի եւ ցեցերի հա-
մար անսպառ պաշարների զիջելու վրա:
Մինչդեռ այնպիսի հաստատութիւններ, ինչպէս
Միլիթարեանների եւ Էլմփադին վանքերն են,
աւելի զիւրութեամբ կարող են գլուխ բերել
չտո կարեւոր հրատարակութիւններ, քան այդ
հնարաւոր է անել մասնաւոր անձանց:

Եւ դժուար չէր այդ անել. պէտք էր միայն
գրական աշխատանքի խելացի բաժանունը եւ
գիտական վերաբերմունք դէպի մեր իրա-
կան պահանջները:

Ի՞նչ վնաս կը լինէր, եթէ, օրինակի համար,
Պարիզի «Բանասէրը» ձուլվէր Վիէննայի «Հան-
դէս»-ի մէջ եւ այս վերջինը դառնար մեզ հա-
մար հնախօսա-լեզուաբանական մի
կենտրոն օրգան, իսկ Վիենտի-
ի «Բաղաձայն»-ը իր մասնագիտութիւնը դարձ-
նէր Ինժեներների եւ Ալիշանի ուղղութիւնը եւ
ընդարձակ մտքով ա շ խ ա ր հ ա գ ր ա կ ա ն
օրգան լինէր, տար մեզ իւրաքանչիւր ամիս
գեղեցիկ քաղաքներով եւ պատկերներով զար-
դարած աշխարհագրական յօդուածներ թէ Հա-
յաստանի եւ թէ այլ երկրների մասին: Ինչո՞ւ
«Արարատը», որը հայ ժողովրդի մէջ է լոյս
տեսնում, չէր կարող հրաժարվել ոչ միայն հը-
նախօսա-լեզուաբանական յօդուածներից, այլ
եւ աստուածաբանական փոքր ու մեծ թիւն-
ն ր ի յ ե ւ ինչո՞ւ չը պէտք է նուիրվէր ժա-
ղովրդի կենսական պահանջների ուսումնասի-
րութեան, նրա հոգեւոր-վարչական խնդիրների
արձարման, հոգեւորականութեան միջոցով
ժողովրդի կեանքի բարեօրոշման ջանքերին, գիւ-
ղական քահանաների միջոցով գործնական
եւ պիտանի դիտելիքներ ի տարածման:
Այն ժամանակ իւրաքանչիւր կուսակալ իր ա-
ռանձին գոյութեան անհրաժեշտութիւնը, իւ-
րաքանչիւրի մէջ կը կենտրոնանային միատե-
սակ ոյժեր, նիւթերը աւելի խնամքով կընտր-
վէին, միջոցներ չէին վատնել նոյնանման
եւ աննշան վարժութիւնների վրա: Իսկ եթէ
զանազան Համալսարանները, Հանրապետու-
նեքը ու Անահիւսներն էլ միանալով՝ եւրօ-

նստեցողներն (աթոռակի մը վրա) օր. Վարդանյանը, եւ կնքամայրը 7 անգամ նորա բոլորտիքը դարձնելով խորհրդաւոր «քօղը» գլուխը նստեց, ապա սկսեց «կէս պսակի» արարողութիւնը: Նոյն պահուն որուն հետեւին մէկը ձառ մը կարգաց, ի դիմաց իր ընկերակցները ողջերթ մաղթելով իրենց սիրելի «քօղի»-ին, որ ոչ մի հոգածութիւն, սէր եւ համակրանք չէր խնայած իրմէ փոքրիկ-ներուն: Ուստի կարծէր երջանկութիւն եւ բարեալութիւն մաղթել, թէ եւ մեծ ցաւ էր իրենց համար զրկուիլ իրենց սիրելի մտերիմէն Ուրիշ մին ալ ոտանաւոր մը արտասանեց պարզապէս յարմար, եւ հանդիսականները բաւական ժպտացուց: Իսկ պատիկ արարողութիւնն թէ առաջ եւ թէ վերջ խօսեցան Սահակ Վ., Ղևոնդ քնիւ (հոգաբարձութեան նախագահ) եւ Խ. Լեւոնեան էֆ., որոնք յօդուեալ եւ միանգամայն ուրախ արամադրութեամբ չէտեցին ու ի վեր հանին հանդէսին վեհութիւնն ու նշանակութիւնը: Գովեցին փեսան իր արժանաւոր եւ վայելուչ ընտրութեան համար, եւ չունի զինքը ամուսնացնելու, սակայն ազգը այսօր իր ծնողն է, իւր վրա հակոյն է: Գինք խնամով եւ իր վրա զօրօգուցողն է: Սոյն ատենաբանութեանը մէջ ընդ մէջ որբուհիք իրենց երգերով կը հրճուեցնէին հանդիսականները, որոնք բաւական երկար ժամանակ վայելեցին հանդէսը: Երբ մնկնելու ժամը հասաւ, որբուհիք բոլորն ալ մինչեւ փողոց ողջերթ մաղթելու գային: Իրենց սիրելի «քօղի»-ին հեռացումը շատ խոր տպաւորութիւն գործեց որբուհիներու վրա, որոնք սկսեցին դառնապէս լալ: Ի՞նչու երաժիշտ ուսուցիչը կը ջանար զիրենք խրատել, որ դադրին լալէ եւ սկսած երգը շարունակեն, անկարելի եղաւ: Որբիկները չունէին ուրիշ միջոցներով, միակ սէրը ձգած էին իրենց մեծ քօղիկին վրա: Հարս-նեւորները հեռանալուց վերջ հեռացան նաեւ միւս հիւրերը: Կէս օրն անցած լինելով, սեղանը մը պատրաստուեցաւ, եւ Սահակ Վ. ու որբուհիները բոլորը միասին ճաշի նստեցան:

Ո՞վ կարող է չը ցանկալ ամբողջ սրտից, որ որբի երկինքը շատ յաճախ այսպէս արեւ ու տաք օրեր լուսացնէ այդ անձար ու խեղճ երեխաների համար: Յիշենք, թէ որքան ահագին թիւ են կազմում նրանք, բայց որքան չնչին են նրանց մասին մտածողները...

ՄԵԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՅՕՐԵԼԵԱՆԸ

Վենետիկի Միթիթարեան վանքից մենք ստացանք հետեւեալ յայտարարութիւնը:

Հայ ազգն, իրեն դարաւոր ցաւերուն մէջ, ունեցեց է թերեւս շատ սիրելիներ. բայց ոչ միայն գործն եղած է այնչափ փրկարար, այնչափ տեւող, որչափ այն մեծ Սեբաստացւոյն, որ անուան հետ գործով ալ եղաւ Միթիթար: Ամբողջ երկու հարիւր տարիներ անցան այն օրէն ի վեր, յորում նա հիմը դրաւ: Կ. Պօլսոյ մէջ՝ իրեն անունը կրող հաստատութեան, զոր յետոյ բարձրացուց Մեթիթի մէջ, եւ վերջը Վենետիկոյ սուրբ Ղազարու կղզիկին մէջ՝ հրաշակներուց զայն: Ինքն Միթիթար գծեց այդ հաստատութեան ուղղութիւնը, որով պիտի գիմէր իրեն նպատակին, այն է՝ մտաւոր եւ պական մտքի թէ ճաշակի ամենատաճիկակարգ արտադրութիւնները հայ ժողովրդի մէջ տարածող մի օրգան դառնային, այն ժամանակ կը գոհացնէին եւ մեր գրականութեան ամենաշատը պակասութիւններից մէկը: Այդ ամսագիրները պէտք է իմանան, որ մեր ընթացիկ կեանքի քաղաքա-հասարակական պահանջները աւելի նպատակադարձ արտադրութիւն են գտնում զանազան տեղերում հրատարակվող հայոց լրագրիներում, իսկ լուրջ գրական-հասարակական ամսագիրը, մայր հողից կտրված, չէ կարող կենսատեսակութիւն ունենալ եւ երկար ապրել:

Այդպէս ուրեմն, պէտք է շարունակել իսկապի բաժանումով վերջ դնել ներկայ գրական շտապութիւններին:

Լեւոն Սարգսեան

ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գաղթականութեան պատմութիւնը դեռ թարմ է բոլորի յիշողութեան մէջ եւ նրա թողած ահագին երկար ժամանակ չի անհետանայ ճարտար-կանցք արտերից: Այն, մարդկանց, պէտք է ընդգծել այս խօսքը, որովհետեւ հասկանալի է, թէ ովքեր կարող են չը մոռանալ երէկվայ երէկութիւնը: Միայն մարդիկ:

Գաղթականների մեծամասնութիւնը սկզբնական եւ կարեւոր օգնութիւնը գաւառների աղքատ ժողովրդից ստացաւ, այդ մասին հասարակութիւնը գիտէր գաւառների համեստ թղթ-

բարոյական վերականգնումն եւ զարգացումն ազգին, եւ որուն համար չի խնայեց ինքն ու եւ է ձիւն եւ զոհողութիւն: Ո՞վ չը գիտեր թէ այդ երկար շրջանին՝ հրշափ դժուարութիւնք եւ խոչընդոտներ ընդ առաջ եղան Մեր-խիթարայ կանգնած Միաբանութեան, որոնք սակայն չի կրցան կասեցնել կամ խոտորեցնել զայն իրեն ուղղութիւնէն: Ո՞վ չը գիտեր թէ նա՞ իրեն Հիմնադրին ոգով ներշնչած՝ հր-բան գրական եւ կրթական ծառայութիւններ մատուց ազգին, մեծ գրագէտներ եւ գործիչներ ընծայելով անոր, եւ ուսանողը հանդիսանալով լուսաւոր յառաջդիմութեան մը, որուն նշույնները ազգին ամենէն աւելի հեռու եւ նոյն իսկ իրենց ազգայնութիւնը մոռացող խաւերուն մէջ թափանցեցին: Հարկ է ըսել թէ ինքն եղաւ որ Եւրոպացու ծանօթացող հայ ազգը, իրեն ազնուագոյն տիպարին մէջ, իրեն հին ճոխ գրականութեամբ եւ դարուն նորա-նոր արուեստից եւ գիտութեանց ձգտող մթնոլորտի, եւ որոնց մէջ գրեթէ արեւմտեայց հասարակարգայ կընթանայ:

Արդ, գալ տարի, 1901-ի սեպտեմբերի 8-ին (ըստ տ. -ի), լրանալով ճիշդ Միաբանութեան հիմնադրութեան երկուսուրսուսայ շրջանը, անհրաժեշտ պարտք կը համարէրք տօնել Հիմնադրին Միթիթարայ եւ ազգիս բարեբաղին յիշատակը, որուն մեծութեան համեմատ՝ տակաւին արժանաւոր պատկ մը, պարտաւորապէս յարգանք մը ընծայում չէ: Բարեկապէս այս առթիւ յայտարարեցին Միաբանութեան տպարանէն հետեւեալ գործերը:

- 1) Հայապատում գիրք, որ է Հ. Ղ. Ալի-շանի հաւաքած Հատուածք պատմութեանց մեր հեղինակաց, ժամանակագրական կարգաւ, մինչեւ ժժ. դար. համառոտ աշխարհաբար ծանօթութեամբ:
- 2) Լիակատար կենսագրութիւն Միթիթարայ Աբրահմ, պատկերազարդ:
- 3) Միթիթարեան Միաբանութեան 200 ամեայ գործունէութիւնն եւ նշանաւոր գործիչները, նոյնպէս պատկերազարդ:
- 4) Համառոտ պատմութիւն Միթիթարայ վարուց եւ գործերուն, նոյն հանդիսին առթիւ ձրիաբար բաշխելի:
- 5) Միթիթարայ եւ իրեն Միաբանութեան գործունէութեան պատմութիւնը, գաղղիներէն լեզուով:
- 6) Պատմութիւն վարուց Միթիթարայ Աբր. խալ. լեզուաւ:
- 7) Հատք ի բանից Միթիթարայ ծառային Աստուծոյ, քաղաքացի իրեն տրված եւ անտիպ գրութիւններէն: Նոյնն անգղիներէն:
- 8) Պատկերազարդ մեծադիր թերթ մը, կատարուելը հանդիսին պատկանող, եւ այլն:

Դարձեալ փափագելի է մեզ, թէ եւ մեր կատարողութիւնն վեր, ուրիշ միայն կողմով մ'ալ յաւերժանել մեծ Սեբաստացւոյ յիշատակը, որուն իրաւ կարգան հաւասարապէս զբաղեցնել եւ ոչ զրաւելուց, ազգայինք եւ օտարը, ներկայք եւ ապագայք, որ փայլեցնէ ոչ լոկ Միթիթարայ մեծութիւնը կամ հանճարը, այլ այն ցեղին՝ որ կրցաւ—եւ կրնայ նոյնպիսի թակիցներից, որոնք գործ տեսնելը գերադասում էին երկար գրելուց ու խօսելուց (Ա. Ա. հարոնեան՝ Իզդիրում Ա. Օհանյանեան՝ Վաղարշապատում, Ա. Գո. Երեւանում եւ այլն): Գաղթականների կային եւ կողմանեան խոշոր քաղաքներում՝ Բագուում, Թիֆլիսում եւ Ռուսաստանի հայաշատ մի քանի քաղաքներում: Դրանցից ամենամեծ խմբին օգնելը Բագուին էր լիճակված, որտեղ գաղթականների եւ տեղական աղքատների թիւը, սակայն, շատ պակաս էր, օրինակ, Սարգարապատի դաշտավայրում տեղաբնակներն անտունների թիւից: Մինչդեռ այս վերլիկներից պատասխարում եւ պահպանում էր լուս ու մունջ կերպով աղքատ գիւղացին,—առաջինների վերաբերեալ դա փ ու զ ու ու ա յ ո վ, անհամեստ կերպով էր նոյն պարտականութիւնը կատարում մեծազարդ Բագու... Բաւական էր, որ մի տիկին իր լանջօղով սկսեց զէպի աղքատները եւ մի 5—10 րօպէշապի էֆֆէկտով «сраспоряжение» անէր եւ դուրս դար, կամ մի օրիորդ, աղքատներին բերանաւորում, թաւաշայ գոյնոցը կապած, ամիսը մի անգամ մի կէս ժամ կերակուր բաժանէր աղքատներին,—է պրծաւ, սալ լոնների պատնետաւոր կալվէրները երկինք էին բարձրացնում հասարակութեան մէջ այդ ամպպիակ էակներին... Ըսաւ է սակ, նոյն բանը անդրադառնում էր եւ մեր պարբերական մամուլի մէջ եւ յաճախ էինք ստիպված լինում կարգալ նոյնպիսի ուխտանալի:

Անցաւ այդ ծանր շրջանը: Հարկւարաւոր

պարագայից մէջ—այսպիսի մեծ ծնունդներ յառաջ բերել:

Անտարակոյ ազգայնոց ազնիւ զգացումները վերաւորած պիտի լինէինք, եթէ ներքին անհուն շրջանի մը մէջ ամփոփելով սոյն հանդէսը, զուտ վանական նկարագիր մը տայինք ա-նոր եւ ոչ ազգային, մինչդեռ ամեն հայ մեզի հաւասար՝ իրաւունք ունի իրենն ըսելու զՄիթիթար եւ անով պարծելու: Ուստի այսու կը ծանուցանենք հայ հասարակութեան մեր գիտունները եւ ծրագրերը, որպէս զի անոնք, որ կը փափագին կարեան ամսակցիլ հանդիսաւ եւ միջոցներ հայթայթել, որով ըստ կարելոյն աւելի հանդիսապէս եւ արժանաւոր կերպով կատարվի յիշատակը այն մեծ մարդուն, որ եւրօպացուց անգամ հիացման եւ յարգանքի առարկա դարձեր է: Որոնք որ կը ցանկան այս մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ կամ ու եւ կը կերպով աշակցել, կարող են ուղղուիլ այն Յանձնաժողովին, որ լատկապէս սոյն հանդիսին համար կազմված է, եւ որուն հասցէն է՝

Կարգադիր յանձնաժողով յօրեւան հանդիսի, Վենետիկ—ս. Լազարե.
La Commission pour les fêtes Jubilaires deux-centenaires Venise (Italie)—s. Lazare.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 25-ին

Որքան էլ ճանապարհները սկզբունքը գեղեցիկ բան լինի, բայց եւ այնպէս յաճախ ձայնների բազմութեան վճիռը լինում է ոչ խելացի: Այս տեսակի ճանապարհներ են համարում ամսին 21-ի մեր դուռնի օրոյում քաղաքին ջուր մատակարարելու հարցում:

Երեւանը խմելու ջուր չունի, այրող ճառագայթներին եւ տապին ենթակայ այս թշուառ քաղաքը զուրկ է ջրից. երեւանցու գործածութեան եւ խմելու ջուրը վաղուք է փողոցներով, բակերի միջով ձգված կեղտոտ առուների միջով, որոնք իրանց մէջ ընդունում են հազար ու մի կեղտոտութիւններ: Զրի կարիքը զգացվել է շատ վաղուց, դեռ 15—20 տարի առաջ զբղւած է եղել ջրանցքի խնդիրը, ճարտարապետ են հրաւիրել, նախագիծը կազմվել է, ջուրն ընտրվել: Մինչեւ անգամ այդ նպատակով մի հարուստ—Ղ. Դազարեանը, կտակել էր 10,000 ր., այն պայմանով, որ ջրանցքը կառուցմանը ձեռնարկվի ոչ ուշ քան վեց տարի, բայց անցան տարիներ, կտակը կորցրեց իր ոյժը, իսկ անհնար երեւանցիները չը կարողացան այդ զէպից օգտվել, մինչեւ որ ներկայ դուռնի նորից զարթեցրեց ջրանցքի խնդիրը: Սակայն այս անգամ էլ ծագել է մի նոր հարց, կաշկանդելով բուն խնդիրը:

Սկզբից մինչեւ վերջը ի նկատի են ունեցել Ղըրիս—Բուլաղ կոչված աղբերանների ջուրը, որը գտնվում է Երեւանից 15 վերստ հեռավորութեան վրա դէպի բարձրաւանդակները: Այս ջուրը քանակութեամբ մեծ է եւ յատկապէս թափում, սակայն ջրանցքի ծախսը հաշուում են մինչեւ 200,000 ր., որը եւ պատճառ է եղել միշտ խնդրի յետաձգելու: Անցեալ տարի, երբ առաջին անգամ նորից հրապարակ է դալիս

գաղթականները գնացին, մնացին մի քանի տասնեակ անտուն, անտէր աղքատներ միլիարդների այդ մայրաքաղաքում: Անցաւ եւ էքստրադի շրջանը, լրագրիները զաղարեցին մեծագործութիւնների պատմութիւնները տա-րարների տուած կօպէշներին, ինչպէս եւ տի-կինների բարեգործական անձնագոյնութիւնների մասին այլ եւս փող չէր փչվում: Դադարեց ա-մեն ինչ, եւ երէկվայ հարիւրներով աղքատնե-րին կերակրող հասարակութիւնը այսօր փողոց-ներն է գցել մի քանի տասնեակ բոկոսն եւ մերկ աղքատներին Երկաթուղու կայարաններում, ձիաբարձի ջուրը, եկեղեցու բազում, ծովափում, Բալախանիի նաւթահանքերում,—ամեն տեղ, ամեն օր եւ ամեն ժամ անցորդնե-րին զգուցանելու չափ ձանձրոյթ են պատճա-րում այդ անտուն-անտիւրականները: Փայլուն հրախաղութիւնը շատ շուտ փոխվեց այսպիսի տկուր իրականութեան... Լեւոնի կօպիլիմենտ-ները, սպանների լակէշները չողորթութեան ուրիշ նիւթեր գտան, իսկ գրուում, արեւալի տակ, մի կտոր հացի համար մեծնող կայ...

Այսպէս է մնում, Բագուում թիֆլիսում էլ, ինչպէս Երեւանում էլ, լաւ չէ: Բայց միթէ միայն թիֆլիսում «Нечаянно» չարախաղներ-թը, իր Օղեսայի թղթակցի բերանով, նոյն գանգաւն է անում: Օղեսայում էլ թա-փում են մերկ, քաղցած, անպապստան հա-լիւ: Զարմանալ է մնում,—աւելացնում է թղթ-թակիցը,—որ Օղեսայի այնքան հարուստ հա-

ջրանցքի հարցը, ճանաւորներից մէկը որտեղից որտեղ դուռնի ուղարկութիւնն է հրաւի-րում Նորք քաղաքամասի ձորակի աղբեր-վրա Որոյում են ջրի յատկութիւնը. քանզի ին տարի սարի կուրծքը, բացում աղբեր-աչերը՝ չափելու համար ջրի յատկութիւնը, եւ ինչ է դուրս գալիս—Այն աղբերը, որի վրա մի քանի հարիւրներ ծախսեցին եւ բաւական խորացրին եւ որը անցեալ տարի օրվայ ըն-թացում տալիս էր մինչեւ 46,000 վէդրօ ջուր, յանկարծ այս տարի նուազել է եւ տա-լիս է միայն մինչեւ 20,000 վէդրօ, մի քանա-կութիւն, որ բոլորովին անբաւարար է մեր քաղաքի պիտոյքների համար: Զրի այսպիսի նուազումը, ինչպէս երեւում է, մեր քաղաքա-գլուխը գիտէր եւ ապացուցանելու համար, որ իր ենթադրութիւնը եւ հակառակ լինելը որոշ հիմքեր ունէին, դուռնի վերջին նիստից մի երկու օր առաջ հրաւիրելով բոլոր ճանաւորնե-րին, անձամբ չափել տուեց ջրի քանակութիւնը եւ գտաւ անցեալ տարվանից կիսով չափ պակ-սած, եւ չը նայած այս բոլորին, մեր ճանա-ւորները մեծամասնութեամբ որոշեցին ջուրը բերել, եթէ մասնաժողովը գեղեցիկ ջրանց-քի ծախսերի նկատմամբ բաւարար լինի, եւ այդ բանը ձեւակերպում են ժամանակաւոր անունը տալով: Այժմ երբ մասնաւոր կերպով մեր ճանաւորներից շատերը իմացել են, որ մասնաժողովը նախատեսել է 30—40,000 ր. ծախս այդպիսի մի ջրի համար, պատրաստվում են յետ վերջնելու իրանց վճիռը, արիստալով որ մի այդպիսի դուռնի պիտի ծախվի այդ տեսակ ջրի վրա: Կայ եւ մի այլ հանգամանք, որ մենք ուզում ենք չեղել. մեր դուռնայում կան ճանաւորներ, որոնք համոզված լինելով, որ այդ ջուրը աննպատակաբար մը է, ձգնում են խնդրին դրական լուծումը տալ, որովհետեւ քաղաքագլուխը հակառակ է այդ բանին, իսկ իրանք հակառակորդ են քաղաքայինին: Սա պատիւ չէ բերում հասարակութիւնից ընտր-ված անհատներին:

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մարտի 18-ին

Մեր պատմական Կարս քաղաքը այս վերջին 10—15 տարվայ մէջ բոլորովին կերպարանա-փոխվեց: Նախկին թրքական խարխուլ է ան-ճաշակ շինութիւնների անկանոն, կեղտոտ ու նեղ փողոցների փոխարեն, այսօր կանգնած կան եւրօպական ճաշակով գեղեցիկ շինութիւն-ներ, լայն եւ մաքուր սալաքաշտած փողոց-ներով: Սակայն, չը նայելով արտաքուստ արած այս հակադրական փոփոխութեան, մեր քաղաքը ունի մի քանի այնպիսի պէտքեր, որոնց չու-տափոյտ լրացնելը շատ անհրաժեշտ է քաղա-քայինների համար: Դեռ մինչեւ այսօր քաղաքը խմելու մաքուր ջուր չունի, չունի իր սեփա-կան հիւանդանոցը, եւ վերջապէս, չունի ինք-նավարութիւն, որ հոգ տանէ յիշեալ անհրա-ժեշտ պէտքերի համար:

Թէեւ անցեալ տարիները ինքնավարութեան հարցը արժարժվեց, նոյն իսկ ժողովների տեղի ունեցան այդ առիթով, բայց ոչ մի հետեւանք

իւր չեն մտածում օգնելու իրանց թշուառ եղ-բայրներին:

Միամիտ պարոնը չը գիտէ, որ հայը փոքր գործերի համար գլուխ չունի. սուր նրան Ա-խալաքալը նման սարսափելի երկրաշարժ, քաղաքների հրդեհներ, հարիւրաւոր մարդկանց եւ հազարաւոր անասուններին ջնջող հեղեղներ, խոտաղի մի քանի տեղ տպագրել նրանց ա-նունները,—այն ժամանակ միայն հայն իր ձեռքը գէպի գրպանը կը տանէ, իսկ թէ ինչ դուրս կը բերի անտեղից, այդ էլ յայտնի է... Թարմ օրի-նակ—երէկվայ երկրաշարժը: Մինչեւ այժմ ժո-ղոված գուժարից դուրս գալով Ողորմած Թագա-ւոր Կայսրի եւ օտարների տուածը, մնացածից էլ դուրս գալով իսկական ժողովրդի տուածը—կը մնայ մի ողորմելի գուժար՝ սուած այն եր-ջանիկների ձեռքով, որոնք պատմութեան էջե-րում ցցվելու անհամեստ յաւակնութիւնն ու-նեն: Իսկ այդ գուժարը կը կարողանար տալ մեր մի քանի տասնեակ հարուստներից միմի-այն մէկը եւ տասը այդպիսի հողեր կը ցա-մաքեցնէին արտաւտեղների մի ամբողջ ծով: Բայց հօ տեսնում էք: Նոյն աղքատ ժողո-րդին է այսօրվայ աղէտին էլ հեղեղի նման թափում մի թաւ կա գիւս կօպէշները, իսկ երէկվայ տուգը՝ այսօր ուրիշին է թողնում հա-սարակութեան վերաւոր մասի բժշկիւր, որովհ-հետեւ երէկ նա յօգնել է, երէկ նա տուել է իր բաժինը...

Ռ. Յովհաննիսեան

չունեցաւ, որովհետեւ քաղաքացիներէն ձեռն-
հաս, «գլուխ քաղաք» անձնաւորութիւններ չը
կային. իսկ տեղական ուղղորդողներն հա-
կադական էր ինքնավարութեան, պատճառաբա-
նելով, թէ դեռ չուտ է եւ քաղաքը միջոց
չունի այդպիսի հաստատութիւն պահելու հա-
մար. այսպէս էլ այս խնդիրը քննեց եւ մինչեւ
այժմ էլ քննած է. իսկ թէ երբ կը զարթոնէ,
անշուշտ այն ժամանակ, երբ քաղաքացիներն
էլ անուշ քնից զարթոննան:

Քաղաքային հիւանդանոցը շինելու հարցը, դեռ
քննարկ Փոսթի Նախագահութեան ժամա-
նակ, արժարձակեց եւ վճարեց էտրիքայ կողմից
տուրքից դուրս գալու գումարը յատկացնել այդ
նպատակին: Այդ գումարը այժմ մօտ 80 հա-
զարի է հասել. իսկ հիւանդանոցի շինութեան
համար, առանձին կոմիտէի կողմից յատ-
կառոյթով եւ նախաձեռնութեամբ, անհրաժեշտ է մօտ
երկու հարիւր հազար ռուբլի. եւ որովհետեւ
այս տարվանից էտրիքայ կողմից տուրքը եւս
վերջացաւ՝ տաւր տարի ժամանակամիջոցը
լրացած լինելու համար, ուրեմն մնում է, որ
80 հազար ռուբլի տարեկան 6% բերելով լրաց-
նէ 200 հազար ռուբլին, որ նոր ձեռնարկին
չհետեւանք: Այս հաշուով ուրեմն, մենք դեռ
մօտ 20—25 տարի պէտք է սպասենք, որ հի-
ւանդանոց ունենանք: Այն ինչ, աւելի խնայելի
եւ քաղաքացիների համար էլ աւելի օգտակար
կը լինէր, եթէ հէնց այս տարի այդ 80 հազար
ռուբլին գործադրվէր քաղաքը մաքուր ջուր
բերելու համար, մասնաւորապէս որ քաղաքը օգտ-
վել է եւ կարող է դեռ էլ օգտվել զինուորա-
կան հիւանդանոցից:

Մեր Կարս-Չայր գարնանը, ամառը եւ ա-
շունքին այնպիսի ապականված եւ պղտոր վի-
ճակի մէջ է գտնվում, որ անկարելի է գործ
ածել նրա ջուրը, թէկուզ հէնց չըզով կամ ուրիշ
միջոցով մաքրելուց յետոյ: Քաղաքի բոլոր աղ-
տեղութիւնները թափվում են նրա մէջ եւ
համարեա ամբողջ քաղաքը, բացառութեամբ
միայն ընտրեալները, գործ են ածում այդ ջու-
րը: Թէեւ Կարսի ձորում կան մի քանի աղ-
բիւրներ, բայց նրանցից օգտվում են միայն
նրանք, որոնք կարողանում են ամառական մօտ
4—5 րոպէի ջրերի տակ, իսկ ահագին մեծա-
մասնութիւնը խմում է դեռի ապականված
ջուրը եւ տանջվում նրա առաջացած հիւան-
դութիւններով:

Ի հարկէ, մեզ համար շատ ցանկալի է ու-
նենալ սեփական հիւանդանոց, բայց քանի որ
առ այժմ այդ բանը քաղաքի ոչ մի բարձր է,
լաւ կը լինի թողնել ապագային այդ հարցի ո-
րոշելը եւ անհրաժեշտ է օր առաջ մտածել քա-
ղաքին մաքուր ջուր հասցնելու մասին, որով
եւ հիւանդութեան պատճառներից զերեւորը
վերացած կը լինի:

Մօտ օրերս Կարս կը ժամանէ նոր նշանակ-
ված մեր նահանգապետ Սամոյլով, որից շատ
բան է սպասում քաղաքը այդ խնդիրների վե-
րաբերմամբ: Մենք յոյս ունենք որ, եթէ ինք-
նավարութիւն տալը դեռ չուտ էլ համարվի,
այնու ամենայնիւ դոնէ նա հիւանդանոց շինե-
լու նախկին վճիռն էլ կը քանդէ եւ քաղաքին
մաքուր ջուր մատակարարելու մասին հոգ կը
տանէ, մասնաւորապէս որ յիշեալ 80 հազար ռուբ-
լին միանգամայն բաւական է Բօլուզի
մաքուր, համեզ եւ առատ ջուրը քաղաքը բե-
րելու համար:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՐՈՒԹԵԱՆ

Մօսկվա, մարտի 15-ին

Մեզանում մի տեսակ խորհրդական արտ է
զարմել այն բանը, որ ամեն մէկը հասարա-
կական գործունէութեան տեսակետից՝ իր խիղ-
ճը մաքրած է համարում լոկ լրագիր կարդա-
լով եւ այնտեղ լսող բազմաթիւ գանգատների
առիթով գրելով մի քանի անգամ ցաւակցա-
բար չարժեքով: «Տիչէ, Տիչէ», շատ վատ է
իրեն գրութիւնը: Եւ ամեն մի յօդուածագիր
կարծես գգուում է, որ իր յայտած բարի ցան-
կութիւնները պիտի մնան «ձայն բարբառող յա-
նապատի», բայց եւ այնպէս, կամենալով յա-
գնել իր տենչը՝ մասնակից անել իր հայեացք-
ներին եւ հասարակութիւնը դիմում է մա-
մուլին: Այսպէս է մեր հրապարակասօսու-
թեան վիճակը, այս է բարի ցանկութիւննե-
րով ի յօդուածների ճակատադիւրը:

Հարկաւոր չէ շատ հեռու գնալ, յիշե՛ք հէնց
«Մշակի» էջերում արժարձակած բազմաթիւ հա-
սարակական հարցերը, վերջինեւ քահանայա-
կան խնդիրը, հայ նկարիչների ցուցահանդէսի,
հայ ուսանողութեան հարցերը, հայկական օ-
պերան եւ այլն եւ այլն, այնպիսի հարցեր,
որոնց մասին միշտ մեծ աղմուկ է բարձրա-
ցել, բայց լուծման խնդիրը միշտ միայնակ է
վերջացել: Խօսողները կամ գործից անձնաւո-
րութիւններն են դիմել եւ՝ կրճատ անհամա-
բույրութեան գաղափարներն հասնելով վեր-
ջիններն գգել, կամ բաւականացել են միայն

հարցը բարձրացնելով: Անձնականութեան կրք-
ներն են միայն, որ միշտ տարել են յաղթա-
նակը. կարեւոր չէ, թէ ինչ է գրած, այլ ով է
գրել: Պարտք թէ Մարտիրոսը, իսկ խնդրե՛ք,
գործը... չափազանցութիւն չէր լինի, եթէ ա-
սէինք, որ նա այդ տեսակ հրապարակօրէն ար-
ժարձակեց յետոյ մի քայլ նոյն իսկ յետ է գը-
նում. անհասկանալի մղղը՝ գործն է քաւում...

Այս տեսակ մտածմունքների առիթ է տա-
լիս «Մշակի» 45-րդ համարում գետնելոված պ.
N. N.-ի յօդուածը մեր չարաքաղակ թատ-
րոնի հազար անգամ ծանած ծանծանի հարցի
մասին. սակայն, կարծում ենք, հարկաւոր է
ողջութեամբ այդ յօդուածի երեւալը, որովհետեւ
նա՝ եթէ նոր չէ իր հիմնական գաղափարով
յամենայն գեղաս պիտանի է գործնական տեսա-
կէտից: Իր անշուշտութեամբ սխալեմով յօդուածա-
գիրը կարծես անդառնալի կերպով այրում է
հայկական բեմի պատճառական տարփածու պա-
րոնների նաւերը, այնպէս որ այդ պարոնները
պիտի կանգնեն դէմ առ դէմ եւ բացեն իրանց
խաղաղութիւնը: Հարցը պարզ է դրած. «Գո՞ւր-
պարոններ, գանգատվում էք, թէ թատրոնը
վատ գրութեան մէջ է, թէ՞ օգնել ցանկանա-
լով, չը գիտէք, ինչպէս օգնել գործին. այ ձեզ
մի լաւ միջոց, որ թէ շատ հեշտ է, թէ իրա-
գործելի. գործե՛ք, պարոններ»: Այն, գործե-
ք:

Շատ խօսել բեմի առողջարար ազդեցու-
թեան, մեր թատրոնի կարեւորութեան մասին
այն էլ Բաղդուի նման նաւերի, ոսկու եւ զեդ-
խութեան մէջ թաղված քաղաքում՝ միանգա-
մայն աւելորդ է. ամեն մի քիչ թէ շատ կըրթ-
ված մարդու համար այդ պարզ է: Մի անգամ
այդ ուրեւ գործը, որը դեռ նոր է սկսել զու-
լը բարձրացնել իր նախորդների աճիւնի մի-
ջից. ընկածին չեն խփում. բաւական է դահիճ
լինել. եղբէ՛ք դէ՛ք այժմ ողորմած, խնայող, ա-
զատի... Լ. Նազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ երկրաշարժից ձեւա-
ված չըլանի համար սերմացու գնելու գոր-
ծը առաջ է գնում աղողութեամբ: Հիւսիսային
Կովկասում գնված է գարնանացան ցորեն մինչեւ
6000 պուղ եւ արդէն կարգադրված է ճանա-
պարհելու դէպի Բօրժօմի կայարանը: Տեղա-
կան ցորենն էլ գնվում է Ախալքալաքի գաւա-
ռում:

Ապրիլ ամսին, ինչպէս հաղորդում են մա-
րաքաղաքի լրագիրները, մտադրութիւն կայ
Պարիզ ուղարկել չորս խումբ Կովկասի ազգու-
թիւններից ցուցահանդէսի այն բաժանմունքի
համար, որտեղ ի ցոյց են դրվելու Ռուսաստա-
նի սահմանամերձ երկրներից ստացված առար-
կաները: Իւրաքանչիւր խումբ կունենայ իր
խմբագետը, որ բացի տեղական լեզուից պէտք
է իմանայ նաեւ ֆրանսերէն: Վրացիները, օ-
սերը, լեզգիները, թուրքերը, չերքէզները եւ
միւս ազգութիւնների ներկայացուցիչները հա-
գած կը լինեն իրանց ազգային շորերը, կու-
նենան իրանց ազգային խմբագետները գործի-
ները եւ տնային կարեւոր առարկաների մի-
մի ժողովածու: Ցուցահանդէսում կը լինեն նաեւ
նրանց զիւղերի մօղեխները:

Մանկավարժների համառուական ժողովը,
որ կայանալու է Մօսկվայում, քննելու է հե-
տեւեալ հարցերը. 1) քննադատութիւն եւ մը-
չակումն այն խնդիրների, որոնք վերաբերում
են տարրական կրթութեան եւ 2) քննադա-
տութիւն այն միջոցների, որոնցով ենթադր-
վում է նպաստել տարրական դպրոցների ու-
սուցիչներին նրանց աւելի լաւ պատրաստելու
մանկավարժական գործունէութեան համար:

Մարտի 24-ին իր աշխատանքները վերջաց-
րեց երկրագործութեան եւ պետական կալուած-
ների միջնորդութեան մէջ կազմված այն
խանձառնողը, որը քննում էր կանանց գիւղա-
տնտեսական կրթութեան վերաբերեալ հար-
ցերը: Միջնորդ Նրմօլով յանձնաժողովի վեր-
ջին նիստը փակելուց առաջ՝ մասնացոյց անե-
լով կատարված աշխատանքի կարեւորութեան
եւ նրանց կեանքի մէջ մտցնելու անհրաժեշ-
տութեան վրա, հաստատ յոյս յայտնեց, թէ
չուտով կանանց աշխատանքը համար կը բաց-
վի լայն եւ արդիւնաւէտ ապագայի:

«Մշակի» երէկվայ համարում, երկրաշարժից
ձեւավածների օգտին ստացված նուէրների
ընդհանուր գումարների մէջ մնացել են հետե-
ւեալ սխալները: Տպված է. «Վնդամենը 250 ռ.
50 կօպէկ», պիտի լինի «218 ռ. 85 կօպէկ»:
Մինչեւ այժմ ստացել ենք ոչ թէ 32,796 ռ.
60¹ / 4, կօպէկ, ինչպէս տպված է, այլ 33,015 ռ.
45¹ / 4, կօպէկ: Նոյնպէս եւ մեզ մօտ մնում է
1015 ռուբլի 45¹ / 4, կօպէկ եւ ոչ թէ 796 ռ.
60¹ / 4, կօպէկ, ինչպէս տպված է սխալմամբ:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Պաւարու գիւ-
ղից եկողները պատմեցին, որ մարտի 20-ին
թէ 21-ին, սահմանի միւս կողմի ջալալցի
15—20 զինված քրդեր յարձակվեցին Մասիսի
ստորոտում բնակվող ուսանադատակ ջալալցի
քրդերի վրա եւ քեզիցն տարան 150 տաւար
եւ 160 ոչխար: Երկու կողմից տեղի ունեցան
հրաշանաձգութիւններ, որի ժամանակ մի ձի
վերաւորվեց: Քրդերը իրանցից մարդ ուղար-
կեցին եւ մի մարդ յետ ստացան. իսկ միւ-
սը ջալալցիները պահեցին որպէս արեան
զին իրանց այն մարդու, որը ամբողջ առաջ
սպանվեց ջալալցիներից: Ինչպէս երեւում է,
գարնան հետ նորից սկսվում է քրդերի ար-
շաւանքը դէպի ուսաց սահմանը»:

Ա.ԽԱՆԻՔԱՆԻՑ մեզ գրում են. «Այս վեր-
ջին երկու ամսում պօստը մեղանում շատ ան-
կանօն է. օրինակ, Բաթումից մի նամակ
ստացվեց տաւն եւ հիզ օրվայ մէջ, այն ինչ
այդ նամակի հետ եղած կապը ստացվեց եր-
կու օրում: Լրագիրները ստացվում են շատ
անկարգ: Յանկարծ ստանում ենք «Մշակի»
№ 49, իսկ չենք ստացել № 47, 48. Եստ
միւս շաբթում ստանում ենք № 52, մի քանի
օրից յետոյ նոր ստանում ենք № 50, 51, մի
խօսքով կատարեալ քաօս: Թէ ինչից է առաջ
գալիս այս բարեկօնեան խանակութիւնը,
դժուար է մեկնել, միայն շատ ցաւալի է, որ
փոխանակ առաջ գնալու, յետ ենք գնում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՎԵՑՏԱՐԻՍՅԻՑ

Ժ ը ն է Վ, մարտի 29-ին

Մի քանի օր է արդէն, որ Պարիզից Ժընեվ
է եկել Մահմադ փաշա: Ժընեվի լրագիրները
առանձին կարեւորութիւն չը տուին թիւրք
փաշայի Շվեյցարիա գալուն եւ բաւականացան
միմիայն փաստը հաղորդելով, մինչդեռ Պարիզի
լրագրութիւնը քաղաքական մեծ հարց շինեց
սուլթանի փեսայի ակումայ ճանապարհորդու-
թիւնից: Պարիզից հեռանալով, Մահմադ փա-
շա, իր երկու որդեց հետ միասին՝ մի նամակ
ուղարկեց Ֆրանսիական լրագրներում, որի մէջ
կերմ չնորհակալութիւն է յայտնում հանրապե-
տական երկրին՝ այն հիւրընկալութեան համար,
որ իրանց ցոյց տրվեց Յրանախալում, մանա-
ւորապէս որ անդադար լուրեր էին պտտում, թէ
ֆրանսիական կառավարութիւնը մտադիր է
արտաքսել իր քաղաքական հիւրերին:

Թէեւ լուր կայ, որ Մահմադ փաշա Ժընե-
վից պիտի ուղեւորվի Լօնդօն, բայց եւ այն-
պէս դադար չէ առնում այն չափը, թէ նա
չուտով վերադառնալու է Կ. Պօլս, սուլթանի
հետ հաշտվելու եւ իր խորին հպատակութիւնը
արտայայտելու համար: Այդ չափը ընդհանուր
է, բոլոր չըլաններում:

Գիտե՛ք ինչեւ Այն պարզ պատճառով, որ
այստեղ առհասարակ հաւատ չունեն դէպի ե-
րիտասարդ-թիւրքերը, որոնց թուին անուղ-
ղակ կերպով պատկանում է եւ նախկին մի-
նիստը Աւելորդ չէ հաղորդել, որ երիտա-
սարդ-թիւրքեր շատ կան եւ մանաւանդ շատ
են եղել Շվեյցարիայում: Սակայն նրանց միա-
լը այս փոքրիկ հանրապետութեան մէջ սովո-
րաբար շատ կարճ է տեւում—Երկու կամ
երեք տարի մի անգամ գալիս է այստեղ Կ.
Պօլսից որ եւ է բէյ կամ փաշա, գրաւոր
լիքը՝ որոշ յանձնարարութեամբ, եւ իջեալ
նում է որ եւ հիւրանոցում, եւ սկսում էր
գործը: Ստամբուլի յատուկ բոլոր խորաման-
կութիւններով Կանչում է իր մօտ մէկ-մէկ
երիտասարդ-թիւրքերին, ծանօթանում նը-
րանց քաղաքական դիտաւորութիւնների հետ,
խօսում հետները՝ նրանց հաճելի ապագայի
մասին, եւ վերջ ի վերջոյ առաջարկում ծա-
մայել հայրենիքին՝ ամսական որոշ ոռ-
ճիկով, առատ վարձատրութեամբ: Եւ մի քանի
չարաթ հազիւ անցած՝ նախկին անհաշտը,
նախկին երիտասարդ-թիւրքը՝ մի քանի հա-
զար ֆրանկը գրաւում՝ ճանապարհ է ընկ-
նում որ եւ է եւրօպական քաղաք, իբրեւ
թիւրքաց զենադուրութեան պաշտօնեայ, թարգ-
ման, կամ կցորդ, եւ կամ ուղղակի Կ. Պօլսի
մի շատ հաճելի պաշտօնի գլուխ անցնելու, եւ
իր անցեալը յաւիտեան յաւիտեանց մոռնա-
լու համար...

Այդ «հոգեփոխութիւնը», կրկնում եմ, տեղի
է ունենում շատ սխալմամբ, նոյն իսկ
շատ աշխարհայ կերպով, եւ այդ պատճառով
է անա, որ երիտասարդ-թիւրքերին այստեղ
համարեա ոչ մի հաւատ չեն ընծայում, թէեւ
նրանց մէջ անշուշտ կան քաջատուութիւններ,

եւ ամեն անգամ, երբ հրապարակի վրա ե-
րեւում է որ եւ է լրագիր, երիտասարդ-թիւր-
քերի ձեռքով խմբագրած, կամ որ եւ է ձեռ-
նարկ, նրանց կողմից սկսած, ամեն կողմից
այն կարծիքն է լսվում, որ այդ բոլորը չու-
տով կայլակ երկր վի, հէնց որ Կ. Պօլսից
կը գալ «գրաւանաւոր» բէյը կամ փաշան...

Հաւատացողներ կան մինչեւ անգամ, որ ա-
մեն տարի Կ. Պօլսից դէպի Եւրօպա են ու-
ղեւորվում շատ աֆերիստներ, արկածախնդիր
թիւրքերի ամբողջ խմբը, յատուկ նպատակ
ունենալով Եւրօպայում մի քանի ամիս աղ-
մուկ հանել իբրեւ «երիտասարդ-թիւրքեր»,
մինչեւ որ գալ «գրաւանաւոր» բէյը՝ եւ իրանք
կը վերադառնան Կ. Պօլսի՝ հաճելի պաշտօն-
ներ ստացած եւ ոսկիներն էլ գրաւանում Երեւի
այդ ենթադրութեան մէջ որոշ ճշմարտութիւն
կայ, այսպէս ինչով բացատրել այն երեւոյթը,
որ այնպաւ, ահա հաշիւ տարրեր են գալիս դէ-
պի Եւրօպա, եւ նոյնպէս անյայտ վերադառ-
նում Կ. Պօլսի, բնական մի երեւոյթին յա-
տուկ կատարեալ կանօնաւորութեամբ—Ահա
այդ է պատճառը, որ այստեղ դժուար են հա-
ւատում Մահմադ փաշային, հակառակ այն
հրապարակական յայտարարութիւններին, որ
նա անում է համարեա ամեն քաղաքական,
սկսած այն օրից, երբ ոտք դրեց ֆրանսիական
հողի վրա:

Խ. Մալումեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Liverpool Daily Post-ի սակելով՝ Վիկտօ-
րիա թագուհին, Սօլսբերիի միջոցով, պատ-
ւերել է լորդ Բօրթօսթին աղաւթի Մէֆլինգը,
որքան զոհ էլ որ պահանջելու լինի այդ աղա-
տութիւնը: Այս պատճառով կարելի է սպասել,
որ երկու շաբթից յետոյ պաշարումը վերաց-
ված կը լինի Մէֆլինգից:

—«Unidet Irichman» լրագիրը, խօսելով
թշնամական ցուցերի բացակայութեան մասին
անգլիական թագուհու իրաւադատումը եղած
ժամանակ, բացատրում է, թէ այդ հանգամա-
նք չը պէտք է հաւատարիմ հպատակութեան
նշան համարել: «Նա կին է, իսկ մենք իրան-
դացիներ, հպարտութեամբ աւելացնում է լը-
րագիրը: Նա կարող է գալ եւ գնալ, բայց երբ
նա այլ եւս մեր երկրում չի լինի, մենք կը
ժողովե՛ք մեր մարդկանց, Հաւատալով, հին
աթիւնացիների նման, որ ստրկութիւնը մահից
էլ վատ է, մենք կը միանանք, որպէս զի կամ
աղատութիւն ձեռք բերե՛ք կամ ընդունա՛լ
օրհնանք: Իրանդիան խառնաբալ յետադիւր
թագուհու ժամանակ անգամ չէ աւելով այն-
պէս, որպէս աւելից Վիկտորիայի ժամանակ
Նա արտաքսեց հայրենիքից 5 միլիօն իրան-
դացիների, իսկ 3 միլիօնին սովամահ անելով
զերեզման դրեց: Բայց երկրը կենդանի է դեռ
եւ նա կը գիմանայ թագուհու ժպիտին, որպէս
երկար տարիներ զինացել է նրա բարեկութեանը»:

—Կ. Պօլսից հաղորդում են եւրօպական լը-
րագիրներին, թէ սովամահ հայերի նման դա-
ւանափոխութեան է դիմում նաեւ թիւրքիայի
միւս քրիստոնէայ ազգաբնակիչները: Քիչ
ժամանակ առաջ ասորի Յակոբեանների արքե-
պիսկոպոս Բուրթոս-Մօնգօ՝ Գօմաի, իրամի եւ
Սառատի իր թաղավթի ցեղակիցների հետ
կաթօլիկութիւն ընդունեց, նոյն տեղից հա-
ղորդում են, թէ մի յոյն, Բրիտանոսոյց անու-
նով, Ամասիայում իր հաշուով 15 հայ որբերի
համար ապաստարան բացեց:

—Թղթակիցների պատմելով՝ գնեալ Ժու-
բէրի թաղումը մի ամենալաւ ազգային ցոյց
էր, որպիսին երբ եւ իցէ տեսել էին Պրէտօ-
րիայի բնակիչները: Տաւ հազար մարդ շարքե-
րով կանգնած էին փողոցներում, երբ անցնում
էր յուղարկաւորութեան հանդէսը, որը նոյնպէս
շատ ազուտ տպաւորութիւն էր թողնում Ժո-
ղովրդի վարմունքը ցոյց էր տալիս, որ նրա
վիշտը մեծ է եւ ընդհանուր: Դիակալեց ամ-
բողովին թաղումը եւ ծագիլները մէջ, իրանց
գեղեցկութեամբ առանձնապէս աչքի էին ընկ-
նում Կրիստի եւ Շաէնի նախագահների պատկե-
ները: Անգլիայի գերի օֆիցերները եւ օտար-
ազգի զինուորական թղթակիցները նոյնպէս
պատկան էին զրել Ժուբէրի դազադի վրա: Ե-
կեղեցում հանդիսաւոր արարողութիւնից յե-
տոյ դազադը տարվեց երկաթուղու կայարա-
նը, որտեղից կուղարկվի Ռիտֆօնէյն: Կա-
յարանում նախագահ Կրիստի մի զգացված
ճառ առաւ եւ ըստ արժանոյն գնահատեց հան-
գեցեալի բարձր արժանաւորութիւնները եւ յե-
տոյ յայտնեց իր հայեացքը պատերազմի այժ-
մեան գրութեան մասին: Նախագահը ասաց, թէ
բօշնները վճել են շարունակել պատերազմը
հանրապետութեան ազատութիւնը վերկու-
համար՝ առանց կորցնելու յոյսը, թէ Աստուած
օգնութեան կը հասնի նրանց: Կրիստի չէ
կասկ

